



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Հաշվետվություն «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված՝

2020թ. զեկույցի հիման վրա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	2
3. ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	3
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ	7
5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ	10

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրների տնտեսական ազատության գնահատման նպատակով մեծ տարածում ունի «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից ամեն տարի հրապարակվող *Տնտեսական ազատության ինդեքս* հետազոտական աշխատանքը: Տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկման համար հավաքագրվող տվյալները ցույց են տալիս, որ տնտեսական ազատության յուրաքանչյուր չափելի ասպեկտ նշանակալի ազդեցություն է ունենում տնտեսական աճի և զարգացման վրա: Ինդեքսը հնարավորություն է տալիս դիտարկվող երկրներին հասկանալու և գնահատելու տնտեսական ազատության շրջանակներում սեփական առավելությունները և թերությունները: Տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկը երկրների միջև նաև ստեղծում է մրցունակություն՝ տնտեսական ազատության ավելի բարձր միավոր ստանալու նպատակով, քանի որ տնտեսական ազատության առաջընթացով է պայմանավորված պետական քաղաքականության բարեփոխումների արդյունքում բնակչության բարեկեցության մակարդակի բարելավումը, աղքատության նվազումը և այլն:

Ըստ 2020 թվականի տվյալների՝ ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը (այսուհետ՝ ՏԱԻ) կազմել է 70.6 միավոր, ինչի արդյունքում Հայաստանը 180 երկրների շարքում զբաղեցրել է 34-րդ հորիզոնականը: Այսպիսի արդյունքով Հայաստանը նախորդ տարվա համեմատ բարելավել է իր ՏԱԻ-ն 2.9 միավորով, և ունի դիրքի բարելավում՝ 13 հորիզոնականով: Ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի դասակարգման՝ Հայաստանը 2020-ին համարվել է «հիմնականում ազատ» տնտեսություն ունեցող երկիր: Հայաստանը 2020-ին իր ՏԱԻ-ով գերազանցում է բոլոր տարածաշրջանների միջին արժեքները, ինչպես նաև աշխարհի միջին արժեքը: Եվրոպայի տարածաշրջանում Հայաստանը 45 երկրների շարքում զբաղեցնում է 18-րդ հորիզոնականը:

2020-ին ՏԱԻ առաջատար երկիրը Սինգապուրն է 89.4 միավորով, որին հաջորդում է նախորդ տարվա առաջատար երկիրը՝ Հոնկոնգը՝ 89.1 միավորով: Տնտեսապես ազատ երկրների լավագույն եռյակը եզրափակում է Նոր Զելանդիան՝ 84.1 միավորով: Ինչպես և նախորդ տարի, 2020-ին նույնպես երկրների շարքը եզրափակում է Հյուսիսային Կորեան՝ 4.2 միավորով:


2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած են չորս հիմնական գործոններ, որոնք նկարագրում են երկրի տնտեսական միջավայրը և գտնվում են կառավարության անմիջական վերահսկողության տակ: Այդ գործոններն են՝

- օրենքի գերակայությունը,
- պետական հատվածի մեծությունը,
- պետական կարգավորման արդյունավետությունը,
- շուկայի բաց լինելը:

Նշված չորս գործոններն իրենց հերթին հաշվարկվում են տնտեսական ազատության 12 բաղադրիչների հիման վրա (Գծապատկեր 1), որոնցից յուրաքանչյուրին տրվում է գնահատական՝ 0-100 միջակայքում: Հարկ է նշել, որ տնտեսական ազատության վերոհիշյալ չորս գործոններից յուրաքանչյուրի համար առանձնացվում է երեքական բաղադրիչ:

Գծապատկեր 1 Տնտեսական ազատության 4 գործոնները և ինդեքսի հաշվարկման համար կիրառվող 12 բաղադրիչները



Վերը նշված 12 բաղադրիչները հաշվարկվում են տվյալ ոլորտին հատուկ վիճակագրական ցուցանիշների հիման վրա, որոնց ագրեգացման, այնուհետև հավասար կշիռներով միջինացման արդյունքում ստացվում է վերջնական տնտեսական ազատության իդնեքսը:

«Հերիթեյջ» հիմնադրամը դիտարկվող երկրները, տնտեսական ազատության ինդեքսներին համապատասխան, դասակարգում է հինգ խոշոր կատեգորիաների: Այսպես, 80% և ավելի ինդեքս ունեցող երկրները համարվում են տնտեսապես «ազատ», 70.0-79.9%՝ «հիմնականում ազատ», 60.0-69.9%՝ «չափավոր ազատ», 50.0-59.9%՝ «հիմնականում ոչ ազատ», 50%-ից ցածր՝ «ճնշված» երկրներ:

2020 թվականի SUH-ի հաշվարկման համար «Հերիթեյջ» հիմնադրամը հիմնվել է 2018-ի երկրորդ կիսամյակից մինչև 2019-ի առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածը բնութագրող ցուցանիշների հիման վրա: Հնարավորության սահմաններում օգտագործվել է 2019թ. հուլիսի դրությամբ հասանելի ամենաթարմ տեղեկատվությունը:

3. ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սեփականության իրավունքի պաշտպանություն: Այս բաղադրիչը ցույց է տալիս, թե որքանով է երկրի իրավական համակարգը ապահովում մասնավոր սեփականության ազատ կուտակումը, մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանվածությունը օրենքով և ցույց է տալիս, թե ինչ չափով են այդ օրենքները գործնականում պահպանվում: Այս բաղադրիչը գնահատելիս հաշվի է առնվում նաև պետության կողմից մասնավոր սեփականության բռնագրավման հավանականությունը: Սեփականության իրավունքի պաշտպանությունը գնահատվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝

- նյութական սեփականության պաշտպանվածություն,
- մտավոր սեփականության պաշտպանվածություն,
- ներդրողների պաշտպանվածության աստիճան,
- մասնավոր սեփականության օտարման հավանականություն,
- հողերի կառավարման որակ:

2. Արդարադատության արդյունավետություն: Այս բաղադրիչը մեծ նշանակություն ունի բոլոր քաղաքացիների իրավունքները թե՛ պետությունից, թե՛ մասնավոր հատվածի առանձին սուբյեկտներից պաշտպանելու տեսանկյունից: Այն պահանջում է արդյունավետ և արդար դատական համակարգ, որպեսզի օրենքները

լիարժեք պահպանվեն և խախտումների դեմ ձեռնարկվեն համապատասխան գործողություններ: Այս բաղադրիչը հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝

- դատարանների անկախություն,
- դատական գործընթացի որակ,
- որակյալ դատական վճռի կայացման հավանականություն:

3. Կոռուպցիայից ազատություն: Կոռուպցիայի առկայությունը նվազեցնում է երկրի տնտեսական ազատության մակարդակը՝ վնասելով անվտանգությունը և տնտեսական հարաբերություններում առաջացնելով խեղումներ: Տնտեսական ազատության վրա ամենամեծ բացասական ազդեցությունն ունի պետական համակարգում առկա կոռուպցիան, որը դրսևորվում է կաշառքի, գումարների շորթման, հովանավորչության, պաշտոնական դիրքի չարաշահման և այլ ձևերով: Այս ամենի հետևանքով կառավարությունը նվազեցնում է իր հանդեպ հասարակության վստահությունը և տնտեսական կենսունակությունը: Կոռուպցիայից ազատությունը գնահատվում է հետևյալ գործոնների հիման վրա՝

- հասարակության վստահությունը քաղաքական գործիչների նկատմամբ,
- անօրինական վճարների և կաշառքների առկայությունը և ծավալները,
- կառավարության քաղաքականության մշակման թափանցիկությունը,
- կոռուպցիայի բացակայությունը,
- կոռուպցիայի ընկալման մակարդակը,
- պետական ծառայությունների թափանցիկությունը:

4. Հարկային բեռ: Այս բաղադրիչը կոմպոզիցիոն չափման միավոր է, որն արտացոլում է մաքսային և հարկային դրույքաչափերը թե՛ ֆիզիկական անձանց, թե՛ իրավաբանական անձանց եկամուտների նկատմամբ: Այս բաղադրիչը ներառում է նաև ընդհանուր հարկային բեռը, այսինքն՝ փաստացի եկամտի այն մասը, որը վճարվում է պետությանը: Հարկային բեռը գնահատվում է հետևյալ գործոնների հիման վրա՝

- ֆիզիկական անձանց եկամտային հարկի սահմանային դրույքաչափը,
- կազմակերպությունների շահութահարկի սահմանային դրույքաչափը,
- հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը:

5. Պետական ծախսեր: Այս բաղադրիչը իր մեջ ներառում է պետության կողմից տրամադրվող տրանսֆերտները՝ թոշակներ, նպաստներ և այլն: Փոքր ծավալով

պետական ծախսեր ունեցող երկրները ստանում են ավելի շատ միավորներ, քանի որ տնտեսական ազատության ինդեքսի գնահատման շրջանակներում պետական ծախսերի օպտիմալ մեծության գնահատում չի իրականացվում: Արդյունքում, թերզարգացած երկրները, մասնավորապես՝ պետական փոքր կարողություն ունեցողները, կարող են արհեստականորեն բարձր միավորներ ստանալ: Սակայն, այս բաղադրիչով ստացած արհեստական բարձր գնահատականը թերզարգացած երկրների համար չեզոքացվում է այլ բաղադրիչների գծով (մասնավորապես՝ սեփականության իրավունք, ֆինանսական ազատություն, ներդրումների ազատություն) ցածր միավորներով: Պետական ծախսերի ազդեցությունը տնտեսական ազատության ինդեքսի վրա ոչ գծային է: Սա նշանակում է, որ, օրինակ՝ 0-ին մոտ պետական ծախսերը ինդեքսի վրա կունենան ավելի փոքր ազդեցություն, իսկ եթե ծախսերը կազմեն, օրինակ՝ ՀՆԱ-ի 30 տոկոսից ավելին, ապա տնտեսական ազատության ինդեքսի վրա բացասական ազդեցությունը ավելի շատ կլինի: Այս բաղադրիչը գնահատվում է պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության հիման վրա:

6. Հարկաբյուջետային կայունություն: Պետական բյուջեի դեֆիցիտի մեծացումը և պետական պարտքի աճող բեռը պայմանավորված են կառավարության կողմից բյուջեի վատ կառավարումով, ինչը հանգեցնում են հարկաբյուջետային կայունության խաթարմանը: Վերջինիս հետևանքով երկրում ի հայտ է գալիս մակրոտնտեսական անկայունություն և մեծանում է տնտեսական անորոշությունը: Հարկաբյուջետային կայունություն բաղադրիչը գնահատվում է հաշվի առնելով՝

- վերջին երեք տարիների պետական բյուջեի պակասուրդի միջին մակարդակը (այս ցուցանիշով ստացվում է հարկաբյուջետային կայունություն բաղադրիչի գնահատականի 80%-ը),
- պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը (այս ցուցանիշով ստացվում է հարկաբյուջետային կայունություն բաղադրիչի գնահատականի 20%-ը):

7. Գործարարության ազատություն: Այս բաղադրիչը ցույց է տալիս պետական կարգավորման և ենթակառուցվածքների համակարգի կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման սահմանափակումների չափը: Այս բաղադրիչի քանակական գնահատականը ստացվում է մի շարք գործոններից, որոնք ազդում են բիզնես սկսելու, վարելու և ավարտելու գործընթացների հեշտության վրա:

8. Աշխատանքի ազատություն: Այս բաղադրիչը գնահատում է աշխատանքի շուկայի վրա ազդեցություն ունեցող իրավական և նորմատիվային ասպեկտների բոլոր

կարգավորումները: Այն իր մեջ ներառում է նվազագույն աշխատավարձի, աշխատողների կրճատումների, հավելյալ աշխատաժամանակի և այլնի կարգավորումները: Աշխատանքի ազատության բաղադրիչի հաշվարկման հիմք են հանդիսանում հետևյալ ցուցանիշները՝

- նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը յուրաքանչյուր աշխատողի համար ավելացված միջին արժեքին,
- լրացուցիչ աշխատողների ներգրավման խոչընդոտները,
- աշխատաժամանակի փոփոխության ճկունությունը,
- անարդյունավետ աշխատակիցներին աշխատանքից ազատելու դժվարությունը,
- օրենսդրությամբ կարգավորվող ծանուցման ժամկետները,
- կրճատման համար պարտադրի վճարները,
- աշխատուժի մասնակցության մակարդակը (տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի հարաբերակցությունը ընդհանուր բնակչության թվաքանակին):

9. Դրամավարկային ազատություն: Այս բաղադրիչը համատեղում է գների կայունությանը և գների վերահսկողության գնահատականները: Թե՛ գնաճը և թե՛ գների վերահսկողությունը խաթարում են շուկայի գործունեությունը: Առանց պետական միջամտության գների կայունությունը լավագույն պայմանն է ազատ շուկայական համակարգի գործունեության համար: Դրամավարկային ազատություն բաղադրիչի հաշվարկման հիմք են հանդիսանում հետևյալ ցուցանիշները՝

- վերջին երեք տարվա ընթացքում գնաճի միջին կշռված մակարդակը,
- գների կարգավորումը:

10. Առևտրի ազատություն: Այս բաղադրիչը չափում է ապրանքների և ծառայությունների ներմուծման և արտահանման նկատմամբ կիրառվող սակագնային և ոչ սակագնային սահմանափակումները և հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝

- առևտրի կշռված միջին սակագինը,
- ոչ սակագնային սահմանափակումները:

11. Ներդրումների ազատություն: Տնտեսապես ազատ երկրում ներդրումային կապիտալի հոսքերի վրա որևէ սահմանափակում չպետք է լինի: Սակայն գործնականում երկրների մեծամասնությունն ունեն ներդրումների հետ կապված

որոշակի սահմանափակումներ: Սա պայմանավորված է օտարերկրյա և ներքին ներդրումների համար տարբեր կարգավորումներով: Կարգավորումները կարող են կապված լինել փոխարժեքի առավաճառքի, կապիտալի շարժի, վճարումների և այլ գործարքների հետ:

12. Ֆինանսական ազատություն: Այս բաղադրիչը բանկային համակարգի արդյունավետության, ինչպես նաև կառավարության վերահսկողությունից անկախության և ֆինանսական համակարգի ինտեգրման ցուցանիշ է: Ֆինանսական համակարգի կազմակերպությունների կապիտալում պետական մասնակցության մեծ բաժինը բացասաբար է անդրադառնում մրցակցության վրա և նվազեցնում է ֆինանսական համակարգի արդյունավետությունը: Ֆինանսական ազատության բարձր մակարդակը նպաստում է բնակչությանը և կազմակերպություններին՝ բավարար հասանելիություն ունենալ ֆինանսական ծառայություններին: Ֆինանսական ազատություն բաղադրիչը գնահատվում է հինգ հիմնական ուղղությունների հիման վրա: Դրանք են՝

- ֆինանսական ծառայությունների պետական կարգավորման աստիճանը,
- ուղղակի և անուղղակի տնօրինման եղանակով բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում պետական միջամտության աստիճանը,
- կառավարության ազդեցությունը վարկերի բաշխման վրա,
- ֆինանսական և կապիտալի շուկայի զարգացման մակարդակները,
- արտասահմանյան մրցակցության բացությունը:


4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը 2020-ին կազմել է 70.6 միավոր, ինչի արդյունքում երկիրը 180 երկրների շարքում զբաղեցրել է 34-րդ հորիզոնականը: Ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի դասակարգման՝ Հայաստանը 2020-ին իր գրանցած արդյունքներով համարվել է «հիմնականում ազատ» տնտեսություն ունեցող երկիր: ՀՀ-ն իր գրանցած արդյունքով 2020-ին գերազանցում է ՏԱԻ համաշխարհային միջին ցուցանիշը (61.6 միավոր) 9.0 միավորով, իսկ տարածաշրջանային (Եվրոպայի) միջին ցուցանիշը (69.8 միավոր) գերազանցում է 0.8 միավորով:

Նախորդ տարվա համեմատ ՀՀ ՏԱԻ-ն աճել է 2.9 միավորով: 2020-ին ՏԱԻ աճին նպաստել է այն փաստը, որ նախորդ տարվա համեմատ ՏԱԻ 12

բաղադրիչներից միայն երկուսում է դիտվել նվազում՝ դրամավարկային ազատություն (նվազել է նախորդ տարվա համեմատ՝ 1.8 միավորով) և առևտրի ազատություն (նվազել է նախորդ տարվա համեմատ՝ 0.2 միավորով) բաղադրիչներում: 12 բաղադրիչներից երկուսում՝ ներդրումների ազատություն (75 միավոր) և ֆինանսական ազատություն (70 միավոր), ՀՀ-ն 2020-ին պահպանել է 2019-ի ստացած գնահատականը: Արդեն մնացած բոլոր բաղադրիչներով 2019-ի համեմատ 2020-ին երկիրը աճ է գրանցել:

Գծապատկեր 2.
ՀՀ 2020թ. տնտեսական ազատության ինդեքսը և դրա 12 բաղադրիչները




Այսպես, Հայաստանը 2020-ին նախորդ տարվա համեմատ առավել մեծ աճ է գրանցել. հարկաբյուջետային կայունություն բաղադրիչի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 15.8 միավոր, արդարադատության արդյունավետություն բաղադրիչի աճը՝ 7.8 միավոր, կոռուպցիայի ազատություն բաղադրիչի աճը՝ 4.8 միավոր, սեփականության իրավունքի պաշտպանություն բաղադրիչի աճը՝ 3.5 միավոր: Մնացած բաղադրիչների գծով աճը 2019-ի համեմատ եղել է չնչին:

ՀՀ SUԻ 2020թ. աճին առավելապես նպաստել է հարկաբյուջետային կայունության բաղադրիչի աճը՝ պայմանավորված պետական բյուջեի դեֆիցիտի


և պետական պարտքի նվազման արդյունքում հարկաբյուջետային կայունության բարելավմամբ:

Գծապատկեր 3. ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը և զբաղեցրած դիրքը վերջին չորս տարիներին



Գծապատկեր 3-ից տեսնում ենք, որ 2017-2019թթ. ՀՀ ՏԱԻ-ն ունեցել է նվազման միտում, որի հետ միասին այդ տարիներին վատթարացել է ՀՀ դիրքը թե՛ բոլոր երկրների շարքում, թե՛ տարածաշրջանի երկրների շարքում: 2020-ին ՀՀ ՏԱԻ-ն կազմել է 70.6 միավոր, ինչը 2019-ին գրանցած ցուցանիշից ավելի է 2.9 միավորով: Գրանցած արդյունքի շնորհիվ 2020-ին 180 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 34-րդ հորիզոնականը (նախորդ տարվա համեմատ դիրքը 180 երկրների շարքում բարելավվել է 13 հորիզոնականով), իսկ արդեն տարածաշրջանի (Եվրոպայի) երկրների շարքում զբաղեցրել է 18-րդ հորիզոնականը (նախորդ տարվա համեմատ դիրքը տարածաշրջանի երկրների շարքում բարելավվել է 6 հորիզոնականով):

Գծապատկեր 4. Տնտեսական ազատության ինդեքսի շարժընթացը, 2008-2020թթ.



Հայաստանը ՏԱԻ-ով մինչև 2018թ. առաջ է եղել ինչպես աշխարհի միջին ցուցանիշից, այնպես էլ տարածաշրջանի (Եվրոպայի) միջին ցուցանիշից: 2018-ին արդեն ՀՀ ՏԱԻ-ն և Եվրոպայի միջին արժեքները հավասարվեցին, իսկ 2019-ին Եվրոպայի միջին արժեքը գերազանցում էր ՀՀ ՏԱԻ-ն: 2020-ին ՀՀ ՏԱԻ-ն նորից առաջ անցավ Եվրոպայի միջին արժեքից՝ գրանցելով մինչ այդ իր ունեցած լավագույն արդյունքը՝ 70.6 միավոր: 2020-ին Հայաստանը ՏԱԻ-ի իր ունեցած արդյունքի շնորհիվ «չափավոր ազատ» երկրների շարքից տեղափոխվեց «հիմնականում ազատ» տնտեսություն ունեցող երկրների շարքը¹:

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ


Ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի՝ 2020թ. 180 երկրների շարքում ամենաազատ տնտեսությունն ունեցող երկիրը Սինգապուրն է՝ 89.4 միավորով: Երկրորդ հորիզոնականում է նախորդ տարվա առաջատար երկիրը՝ Հոնկոնգը՝ 89.1 միավորով, լավագույն եռյակը եզրափակում է Նոր Զելանդիան՝ 84.1 միավորով: Չորրորդ և հինգերորդ հորիզոնականները զբաղեցնում են համապատասխանաբար Ավստրալիան (82.6 միավոր) և Շվեյցարիան (82.0 միավոր): «Ազատ» երկրների շարքը եզրափակում է Իռլանդիան՝ 80.9 միավորով զբաղեցնելով 6-րդ հորիզոնականը:

¹ «Հիմնականում ազատ» տնտեսություն ունեցող երկրների շարքը Հայաստանը համալրել էր նաև 2017թ.՝ 70.3 միավորով:

2020-ին, ինչպես և նախորդ տարի, ՏԱԻ վատագույն արդյունք է գրանցել Հյուսիսային Կորեան՝ 4.2 միավորով: Վատագույն եռյակի մեջ են մտնում նաև Վենեսուելան և Կուբան՝ ունենալով համապատասխանաբար 25.2 միավոր և 26.9 միավոր:

Ըստ տարածաշրջանների ՏԱԻ ամենաբարձր ցուցանիշը 2020-ին, ինչպես և վերջին չորս տարիներին, գրանցել է Եվրոպան, որի մեջ մտնում է նաև Հայաստանը: Հարկ է նշել, որ ի տարբերություն նախորդ երկու տարիների՝ **2020-ին Հայաստանը իր ունեցած 70.6 միավորով, գերազանցում է Եվրոպայի միջին արժեքը (69.8 միավոր): Հայաստանը վերջին չորս տարիներին գերազանցում է աշխարհի միջին արժեքը:** Հատկանշական է նաև այն փաստը, որ 2020-ին 2019-ի համեմատ բոլոր տարածաշրջանների միջին արժեքները աճ են գրանցել, բացառությամբ՝ Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանի:

Գծապատկեր 5. Տնտեսական ազատության ինդեքսի տարածաշրջանային միջին արժեքները և Հայաստանի գնահատականը, 2017-2020թթ.



Աղյուսակ 1-ում Հայաստանը համեմատվում է Եվրոպայի տարածաշրջանի երկրների հետ: Հայաստանը նշված տարածաշրջանի երկրների հետ համեմատելիս, ինչպես տեսնում ենք, ունի միջինից բարձր ցուցանիշ, ինչի արդյունքում դիտարկվող 45 երկրների շարքում զբաղեցնում է 18-րդ հորիզոնականը: 2020-ին նշված տարածաշրջանի առաջատար երկիրը Շվեյցարիան է, որը համաշխարհային


վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 5-րդ հորիզոնականը՝ 82.0 միավորով:
Դիտարկվող երկրների շարքը եզրափակում է Ուկրաինան՝ 54.9 միավորով:

**Աղյուսակ 1. ՀՀ և Եվրոպայի տարածաշրջանի երկրների SMI
համեմատությունը 2020թ.**

Երկիր	Հորիզոնական		Ինդեքս
	Տարածաշրջանային	Համաշխարհային	
Շվեյցարիա	1	5	82.0
Իռլանդիա	2	6	80.9
Մեծ Բրիտանիա	3	7	79.3
Դանիա	4	8	78.3
Էստոնիա	5	10	77.7
Վրաստան	6	12	77.1
Իսլանդիա	7	13	77.1
Նիդեռլանդներ	8	14	77.0
Լիտվա	9	16	76.7
Լյուքսեմբուրգ	10	19	75.8
Ֆինլանդիա	11	20	75.7
Շվեդիա	12	22	74.9
Չեխիա	13	23	74.8
Գերմանիա	14	27	73.5
Նորվեգիա	15	28	73.4
Ավստրիա	16	29	73.3
Լատվիա	17	32	71.9
Հայաստան	18	34	70.6
Բուլղարիա	19	36	70.2
Կիպրոս	20	37	70.1
Ռումինիա	21	38	69.7
Մակեդոնիա	22	41	69.5
Մալթա	23	42	69.5
Ադրբեջան	24	44	69.3
Լեհաստան	25	46	69.1
Բելգիա	26	48	68.9
Սլովենիա	27	52	67.8
Կոսովո	28	53	67.4
Պորտուգալիա	29	56	67.0
Ալբանիա	30	57	66.9
Իսպանիա	31	58	66.9
Սլովակիա	32	60	66.8
Հունգարիա	33	62	66.4
Ֆրանսիա	34	64	66.0
Սերբիա	35	65	66.0
Թուրքիա	36	71	64.4
Իտալիա	37	74	63.8
Բոսնիա և Հերցեգովինա	38	82	62.6
Խորվաթիա	39	84	62.2
Մոլդովա	40	87	62.0
Բելառուս	41	88	61.7
Չեռնոգորիա	42	91	61.5
Ռուսաստան	43	94	61.0
Հունաստան	44	100	59.9
Ուկրաինա	45	134	54.9

Հարևան երկրների շարքում տնտեսական ազատության ինդեքսով 2020-ին ամենաբարձր արդյունքն է գրանցել Վրաստանը՝ 77.1 միավորով, համաշխարհային վարկանիշային սանդղակում զբաղեցնելով 12-րդ հորիզոնականը: Եվրոպայի երկրների շարքում Վրաստանը 2020-ին 6-րդ հորիզոնականում է: Իսկ մեր մյուս հարևանները 2020-ին իրենց գրանցած արդյունքներով հետ են մնում Հայաստանից: Այսպես, Ադրբեջանը 2020-ին ՏԱԻ ստացել է 69.3 միավոր, ինչի արդյունքում զբաղեցնում է 44-րդ հորիզոնականը աշխարհի երկրների շարքում և 24-րդը Եվրոպայի երկրների շարքում: Թուրքիան 2020-ին ՏԱԻ ստացել է 64.4 միավոր, զբաղեցնում է 71-րդ հորիզոնականը աշխարհի երկրների շարքում և 36-րդը Եվրոպայի երկրների շարքում: Հարևան Իրանը 2020-ին ՏԱԻ ստացել է 49.2 միավոր, ինչի արդյունքում զբաղեցնում է 164-րդ հորիզոնականը՝ բոլոր երկրների շարքում:

Գծապատկեր 6. Հայաստանի, հարևան երկրների և ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական ազատության ինդեքսները 2017-2020թթ.²



Հայաստանը 2020-ին իր ունեցած ՏԱԻ 70.6 միավորով գերազանցում է ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներին: Այսպես, ԵԱՏՄ անդամ երկրների շարքում Ղազախստանն իր ունեցած 69.6 միավորով բոլոր երկրների շարքում զբաղեցնում է 39-րդ հորիզոնականը, Ղրղզստանը 62.9 միավորով զբաղեցնում է 81-րդ հորիզոնականը աշխարհի երկրների շարքում: Բելառուսը 61.7 միավորով

² Հայաստանի և այլ երկրների ինդեքսների համեմատականն աղյուսակի տեսքով ներկայացված է հավելվածներում:

համաշխարհային վարկանիշային աղյուսակում 88-րդն է, իսկ արդեն ԵԱՏՄ անդամ երկրների ՏԱԻ շարքը եզրափակում է Ռուսաստանը՝ 61.0 միավորով, ինչի արդյունքում երկիրը համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 94-րդ հորիզոնականը:

Հավելված 1

**Հայաստանի և մի շարք այլ երկրների տնտեսական ազատության
ինդեքսները 2008-2020թթ.**

Երկրները	Տնտեսական ազատության ինդեքս												
	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Հայաստան	69.9	69.9	69.2	69.7	68.8	69.4	68.9	67.1	67.0	70.3	68.7	67.7	70.6
Ադրբեջան	55.3	58.0	58.8	59.7	58.9	59.7	61.3	61.0	60.2	63.6	64.3	65.4	69.3
Բելառուս	45.3	45.0	48.7	47.9	49.0	48.0	50.1	49.8	48.8	58.6	58.1	57.9	61.7
Բելգիա	71.7	72.1	70.1	70.2	69.0	69.2	69.9	68.8	68.4	67.8	67.5	67.3	68.9
Չինաստան	53.1	53.2	51.0	52.0	51.2	51.9	52.5	52.7	52.0	57.4	57.8	58.4	59.5
Չեխիա	68.1	69.4	69.8	70.4	69.9	70.9	72.2	72.5	73.2	73.3	74.2	73.7	74.8
Էստոնիա	77.9	76.4	74.7	75.2	73.2	75.3	75.9	76.8	77.2	79.1	78.8	76.6	77.7
Ֆրանսիա	64.7	63.3	64.2	64.6	63.2	64.1	63.5	62.5	62.3	63.3	63.9	63.8	66.0
Վրաստան	69.2	69.8	70.4	70.4	69.4	72.2	72.6	73.0	72.6	76.0	76.2	75.9	77.1
Գերմանիա	70.6	70.5	71.1	71.8	71.0	72.8	73.4	73.8	74.4	73.8	74.2	73.5	73.5
Հունաստան	60.6	60.8	62.7	60.3	55.4	55.4	55.7	54.0	53.2	55.0	57.3	57.7	59.9
Իրան	45.0	44.6	43.4	42.1	42.3	43.2	40.3	41.8	43.5	50.5	50.9	51.1	49.2
Ղազախստան	61.1	60.1	61.0	62.1	63.6	63.0	63.7	63.3	63.6	69.0	69.1	65.4	69.6
Ղրղզստան	61.1	61.8	61.3	61.1	60.2	59.6	61.1	61.3	59.6	61.1	62.8	62.3	62.9
Լատվիա	68.3	66.6	66.2	65.8	65.2	66.5	68.7	69.7	70.4	74.8	73.6	70.4	71.9
Լիտվա	70.9	70.0	70.3	71.3	71.5	72.1	73.0	74.7	75.2	75.8	75.3	74.2	76.7
Մոլդովա	57.9	54.9	53.7	55.7	54.4	55.5	57.3	57.5	57.4	58.0	58.4	59.1	62.0
Նիդեռլանդներ	77.4	77.0	75.0	74.7	73.3	73.5	74.2	73.7	74.6	75.8	76.2	76.8	77.0
Ռուսաստան	49.8	50.8	50.3	50.5	50.5	51.1	51.9	52.1	50.6	57.1	58.2	58.9	61.0
Սլովակիա	70.0	69.4	69.7	69.5	67.0	68.7	66.4	67.2	66.6	65.7	65.3	65.0	66.8
Շվեդիա	70.8	70.5	72.4	71.9	71.7	72.9	73.1	72.7	72.0	74.9	76.3	75.2	74.9
Տաջիկստան	54.4	54.6	53.0	53.5	53.4	53.4	52.0	52.7	51.3	58.2	58.3	55.6	52.2
Թուրքիա	59.9	61.6	63.8	64.2	62.5	62.9	64.9	63.2	62.1	65.2	65.4	64.6	64.4
Ուկրաինա	51.0	48.8	46.4	45.8	46.1	46.3	49.3	46.9	46.8	48.1	51.9	52.3	54.9
ԱՄՆ	81.0	80.7	78.0	77.8	76.3	76.0	75.5	76.2	75.4	75.1	75.7	76.8	76.6

Հավելված 2

2020թ. Հայաստանի և մի շարք այլ երկրների տնտեսական ազատության
ինդեքսի և դրա բաղադրիչների արժեքները

	Տնտեսական ազատության ինդեքս	Սեփականության իրավունքի պաշտպանություն	Արդարադատության արդյունավետություն	Կոռուպցիայից ազատություն	Հարկային բեռ	Պետական ծախսեր	Հարկաբյուջետային կայունություն	Գործարար ակտիվություն	Աշխատանքային ազատություն	Դրամադարձակրի ազատություն	Առևտրի ազատություն	Ներդրումների ազատություն	Ֆինանսական ազատություն
Հայաստան	70.6	60.7	54.1	43.4	84.9	80.6	68.8	81.0	72.5	76.0	80.6	75.0	70.0
Ադրբեջան	69.3	67.1	53.9	38.7	88.0	63.0	99.2	80.8	66.2	69.8	74.6	70.0	60.0
Բելառուս	61.7	63.2	48.4	37.4	88.8	54.1	95.4	76.4	74.8	69.8	82.0	30.0	20.0
Բելգիա	68.9	84.5	62.5	80.2	46.7	17.2	77.0	75.2	61.1	80.5	86.4	85.0	70.0
Չինաստան	59.5	60.9	76.3	46.0	70.4	67.9	67.5	76.8	64.4	71.1	72.4	20.0	20.0
Չեխիա	74.8	76.8	49.9	64.2	82.0	52.7	97.8	69.7	77.6	80.8	86.4	80.0	80.0
Էստոնիա	77.7	83.2	73.7	85.9	81.1	53.3	99.9	73.5	57.3	78.6	86.4	90.0	70.0
Ֆրանսիա	66.0	85.9	71.2	83.3	48.8	4.5	67.1	82.5	46.1	76.7	81.4	75.0	70.0
Վրաստան	77.1	68.6	57.9	64.8	87.1	73.6	94.4	85.3	76.3	78.3	88.6	80.0	70.0
Գերմանիա	73.5	80.5	74.3	82.8	60.9	42.2	92.9	82.8	53.0	76.7	86.4	80.0	70.0
Հունաստան	59.9	57.0	48.6	51.2	59.0	31.5	80.0	73.7	52.0	79.4	81.4	55.0	50.0
Իրան	49.2	36.9	37.1	33.5	81.0	89.2	86.5	57.3	50.7	49.0	54.6	5.0	10.0
Ղազախստան	69.6	61.3	62.1	40.9	92.3	85.5	84.1	74.6	86.0	68.1	80.2	50.0	50.0
Ղրղզստան	62.9	53.6	31.3	32.0	94.1	58.5	66.7	73.6	79.6	76.4	79.2	60.0	50.0
Լատվիա	71.9	72.3	51.1	46.4	76.9	58.3	96.5	77.0	72.4	80.2	86.4	85.0	60.0
Լիտվա	76.7	77.9	62.1	67.4	84.9	66.0	97.4	71.9	76.5	79.7	86.4	80.0	70.0
Մոլդովա	62.0	60.5	31.7	37.2	86.1	71.6	96.2	68.1	37.0	72.0	78.0	55.0	50.0
Նիդեռլանդներ	77.0	90.0	73.9	90.1	51.7	45.2	94.1	80.4	60.2	82.5	86.4	90.0	80.0
Ռուսաստան	61.0	56.8	44.4	41.3	88.5	63.8	98.7	80.2	52.1	68.2	77.8	30.0	30.0
Սլովակիա	66.8	73.1	41.7	49.7	78.5	50.2	92.6	55.3	52.6	75.9	86.4	75.0	70.0
Շվեդիա	74.9	88.8	79.9	91.4	43.6	25.8	97.0	85.3	53.8	81.2	86.4	85.0	80.0
Տաջիկստան	52.2	49.1	50.0	32.0	91.8	62.3	26.0	65.9	47.7	71.0	75.0	25.0	30.0
Թուրքիա	64.4	57.4	53.7	44.6	76.7	64.1	86.1	67.0	49.2	66.1	78.0	70.0	60.0
Ուկրաինա	54.9	47.5	42.2	37.9	81.1	47.2	83.9	61.3	48.3	63.0	81.2	35.0	30.0
ԱՄՆ	76.6	81.8	83.7	77.2	74.6	56.5	54.3	83.3	87.9	75.5	79.8	85.0	80.0

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: